



ՄԹԻՆԱՅԻՆ ԵՎ ՏՐԱՎՄԱՏԻԿ ԻՐՐՈՂՈՒԹՅԱՆ ԵՐԵՋ ՏԵՍԱԿՆԵՐ

ՊՐԱԿԱՆ

Երեխաները հանդիպում են դրական սթրեսային իրավիճակների գրեթե ամեն օր, որոնց հետ երեխան սովորում է իր կյանքում գործ ունենալ և առողջ կերպով արձագանքել:

ՏԱՆԵԼԻ

Երեխան բախվում է տհաճ, ծանր, դժվար հաղթահարվող իրավիճակների, ինչպես օրինակ՝ մտերիմի մահը, միջավայրի փոփոխությունը, աղետը և այլ: Եթե երեխայի կողքին առկա են աջակցող մարդիկ, ապա նա կարողանում է որոշակի ժամանակ անց հաղթահարել իրավիճակի հետևանքները: Եթե երեխան ստանում է ոչ համապատասխան աջակցություն, երեխայի ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական բարեկեցությանը մեծ վտանգ է սպառնում:



ԹՈՒՆԱՎՈՐ

Երբ երեխան ապրում է երկար, անընդմեջ, պարբերաբար վերարտադրվող տրավմատիկ իրավիճակում, նա հետզհետե սպառնում է իր ներուժը, պայքարելու մեխանիզմները և հայտնվում է «թունավոր» տրավմատիկ իրավիճակում: Նման իրավիճակների օրինակներ են ընտանեկան բռնությունը կամ ինսամբի ծայրահեղ պայմանները: Այս դեպքում իրադրությունը կարող է մեծ խոչընդոտ դառնալ երեխայի զարգացման համար և բացասաբար ազդել հետագա կյանքի վրա:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:





ԵՐԵՒԱՅԻ ՀԱԿԱԶՂՈՒՄՆԵՐԸ ՏՐԱՎՄԱՏԻԿ ԻՐՈՂՈՒԹՅԱՆԸ

ՄԱՐՄԻՆ

- սթրեսին տրվող ֆիզիկական հակազդումների կառավարման անկարողություն,
- քրոնիկ հիվանդությունների և ախտանիշների արտահայտում և սրացում:

ՄԻՋՁ

- մտածելու, կենտրոնանալու, սովորելու դժվարություններ
- հիշողության վատթարացում
- մեկ գործունեությունից կամ մտքից մեկ ուրիշին անցնելու դժվարություն:

ՀՈՒՅՁՆԵՐ ԵՎ ԱՊՐՈՒՄՆԵՐ

- ցածր ինքնագնահատական
- հուզական վիճակի կառավարման դժվարություններ
- անապահովության զգացում
- դժվարություններ ընկերների հետ
- վստահելու անկարողություն
- մտերիմների հետ կապվածություն ստեղծելու դժվարություն
- տազնապներ
- դեպրեսիվ տրամադրություն:



ՎԱՐՁ

- իմպուլսիվություն, ինքնավերահսկողության պակաս
- ագրեսիվություն, կամակորություն, հակաճառում, նեգատիվիզմ
- կախվածությունների առաջացում (թմրանյութ, ակոհոլ, ծխախոտ)
- ինքնասպանության մտքեր կամ գործողություններ:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:





ԵՐԵՒԱՅԻ ԸՎՐԵԿՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆՈՂ ՂՈՐԾՈՆՆԵՐ ՏՐԱՎՄԱՏԻԿ ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՁՈՒՄ

ԱՌՈՐՁԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ ՈՒՆԵՑԱԾ ՓԱՍՏԱՅԻ ԱՂՁՆՈՒԹՅՈՒՆԸ

Օրինակ՝ տեղահանումը, մտերիմի կորուստը, տուն կորցնելը:



ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԵԾԱՀԱՍՏԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԽՆԱՄՈՂՆԵՐԻ ՁԵՐՈՒՑԱԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

Շատ կարևոր է մեծահասակների և խնամողների ֆիզիկական ու հուզական «հասանելիությունը»: Երեխան պետք է զգա մեծահասակի անկեղծությունը և կարողանա կիսվել սեփական դժվարություններով:

ԱՏՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԸՆՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Տրավման և սթրեսը կարող են սրել այն բոլոր գծերը, որոնք առկա էին երեխաների մոտ նախքան նմանատիպ փորձը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԽՇԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՎՈՐՈՂՎՃՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Բաց, անկեղծ և անմիջական շփման ոճ ունեցող ընտանիքներն ավելի հեշտ կարող են հաղթահարել տրավմատիկ իրողությունը, առավել նպաստել երեխայի վերականգնմանը, քան այն ընտանիքները, որտեղ սովորական են վեճը, կոնֆլիկտները, մեղադրանքները, օտարացումը:



ՍՈՉԻԱԿԱՆ ՄԻԳՐԱՎԱՅՐԸ

Բացի ընտանիքից երեխայի կյանքում մեծ դեր ունեն հասակակիցները, դպրոցը, խմբակները և այլ վայրերը, որտեղ երեխան կարող է հաճախել կամ հաճախել է մինչև տրավմատիկ իրողությունը

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

